

ԷԴ. ԱՐԱՅԻՆ

Ֆիլ գիտ. դոկտոր

ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԼԵԶՈՒՆ ՈՐՊԵՍ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ  
ՀԱՄԱԳԻՐԱՅԻՆ ԼԵԶՈՒ

Հայաստանում սովետական կարգերի հաստատումը պատասխան մեջ ներ չտեսնված ճնարավորություններ տվեց հայ ժողովրդին՝ տնտեսական, քաղաքական ու կուլտուրական վերելքի համար Սովետական կարգերի օրոք անցած այս 27 տարբինների ընթացքում Սովետական Հայաստանը տնտեսության, կուլտուրայի ու գիտության ընազավառներում այնպիսի հսկայական նվաճումներ է ունեցել, որ անցյալում հայերը երազել կարող էին միայն իր աղատ կամքով մանելով Սովետական Միության եղբայրական ժողովուրդների համերաշխ ընտանիքի մեջ՝ հայ ժողովուրդն ազատություն ստացավ գրսերելու իր բոլոր ընդունակությունները և դրանք ի սպաս դրեց իր սոցիալիստական հայրենիքի բարգավաճման ու ձեռվ ազգային, բռվանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի աննախընթաց զարգացման գործին Եղբայրության հարազատ ռում մեծ ժողովրդի օդնությամբ այս կարճ ժամանակամիջոցում հայ ժողովուրդը յուրացրեց մարդկության առաջավոր գիտությունն ու կուլտուրան, զինվեց ժամանակակից տեխնիկայով և երջանիկ սոցիալիստական կյանք կերտեց իր համար:

Հսկայական են հայ ժողովրդի նվաճումները գիտության, գրականության ու արվեստի ընազավառում: Հսկայական են հայ ժողովրդի նվաճումները նաև լեզվի ընազավառում: Հնարավորություն ստանալով ազատորեն զարգացնելու յուր ազգային լեզուն՝ հայ ժողովուրդը մի նոր, պատմության մեջ դեռ չտեսնված բարձր աստիճանի է բարձրացրել իր ազգային լեզուն: Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց առաջ գրական լեզուն, որով խոսում էր հայ ազգի մի աննշան մասը միայն, սո-

վետական կարդիքի օրոք դարձացել մշտիվել ու հարստացել է անհամար նոր բառերով, զիտական անբաժններով, դարձվածքներով ու ոճերով։ Յուր ամբողջ հորսությամբ ժողովրդական լայն մասսաների սեփականությունը լինելով՝ սովորածայ լիզուն ոչ միայն բարձրացել է պետական լիզվի աստիճանին, դարձել Սովորական Հայտառանի գրականության, զիտության, արվեստի, մամուլի, զպրացների, բարձրագույն ռազմական հաստատությունների ու ռազիոյի լիզուն, այլև հանգիստանում է աշխատավոր ժողովրդի խոսակցական լիզուն։ Այս կարճ ժամանակամիջում սովորածայ լիզվի կարևորագույն նվաճումներից մեկը հենց այն է, որ նա գարձել է ամբողջ սովորածայ ժողովրդի հանրամատչելի խոսակցական լիզուն, որ նա սուցել է ամենամեծ ժողովրդայնություն։ Այդ լիզվով նույնում խոսում այսօր մեր երկրի կոլխազնիկները, բանվորները, ինտելիգենցիան։ Սակայն սովորածայ լիզվի նվաճումների արժեքն ամբողջապես զնահատելու համար մեղ անհրաժեշտ է թեկուղ թեթևակիորեն ցույց տար թե ինչ էր նաև հայոց լիզուն, նախասովիտական շրջանում, և ապա՝ ինչ է այսօր։

Հայտառանում Սովորական իշխանություն հաստատվելուց առաջ հայոց լիզվի գործածությունը սահմանափակվում էր զըպը բոցով, մամուլով, թատրոնով ու գրականությամբ։ Հայ ընտանիքներում, իրեն կանոն, գրական լիզվով չէին խոսում, և զեր նոր գրական ասպարեզ բարձրացած, հազիվ մեկ դարու կյանք աւնեցած հայոց աղջային գրական լիզվին սպառնում էր արդեն միայն գրականության լիզու, «գրոց լիզու» զանալու վտանգը։ Ինչպես հայտնի է, հենց այդ վանագն է, որ այնքան վտանգը է անցյալի այն բազմաթիվ գործիչներին, որոնք հոգում էին հայոց լիզվի մասին։ Դազարոս Աղայանի, Վահան Տերյանի, Մտեփան Մալխասյանցի և շատ ուրիշների դառնացած, երբեմն խուճապային տրտունջներն այդ իրողության լավաղույն արձագանքներն են։ Հիշենք միայն Մալխասյանցի խոսքերը։ «Եներկայում ուռւահայության առջև զրված է հայերենի լինելու թե չինելու հարցը իր բոլոր վտանգավոր հետեանքներով... որքան էլ մենք կամենանք հուսագրել մեղ, որքան էլ ստիպենք մեղ լավատես լինել, այնուամենայնիվ պետք է խոստովանենք, որ հայերեն լիզուն յուր գոյության ճգնաժամի մեջ է, և եթե արտաքո կարգի պայմաններ առաջ չգան, նա կկորչի բոլորովին հեռու կամ մոտիկ ապագայում։ Այս խոսքերը, որքան էլ տագ-

նապալից, այնուամենայնիվ իրական հիմք ունեին Արտաքո կարգի պայմաններ հարկավոր էին հայոց լեզվի վերածնունդի ու հետագա զարգացման համար Մալխասյանցը գիտե՞ր արդյոք, թե ինչ «արտաքո կարգի պայմաններ» են հարկավոր և ինչպես պետք է ստեղծել այդ պայմանները. հաղիվ թե՛ Բայց այդ պայմանները անհրաժեշտ էին և ստեղծվեցին. Ցարիզմի դաժան լուծը թոթափած ուսւ մեծ ժողովուրդը օգնության եղբայրական ձեռք մեկնեց հայ ժողովրդին և փրկեց նրան անդառնալի կորըստից. Խուս ժողովրդի օգնությամբ հայ ժողովուրդը նվաճեց իր աղաւությունը, ստեղծեց իր անկախ զիտությունը և դրանով իսկ ստեղծեց այն «արտաքո կարգի պայմանները», որոնք անհրաժեշտ էին հայ լեզվի վերածնունդի և հետագա զարգացման համար. Եվ ահա այդ պայմաններում, Սովետական իշխանության օրոք, հայոց ազգային գրական լեզուն մտավ իր իսկական զարգացման փուլը. Անին յան-ստալինյան ազգային քաղաքականությունը հենց սկզբից հեթ ստեղծեց բոլոր պայմանները Սովետական Միության ինչպես բոլոր ժողովուրդների, այնպիս էլ հայ ժողովրդի աղջային լեզվի բուռն վերելքի համար. Սովետական Միության մեջ մտնող բազմազգի ժողովուրդները տնտեսական, քաղաքական ու կուլտուրական զարգացման տարրեր աստիճանի վրա էին կանգնած սովետական կարգերի հաստատման ժամանակ. «...Աղդությունների այդ անհավասարության էլ հայ անդառնակիվ, անցյալից մի ժառանգություն ենք ստացել, ըստ որի մի ազգություն, այն է՝ վելիկոուսականը, քաղաքական ու արդյունաբերական տեսակետից ավելի զարգացած է զուրս եկել, քան մյուս ազգությունները. Մրանից էլ՝ փաստական անհավասարություն, որը մի տարում չի կարող վերացվել բայց որը պետք է վերացվի՝ հետամմաց ազգերին տնտեսական, քաղաքական ու կուլտուրական օգնություն ցույց տալու միջոցով»:<sup>1</sup>

Ենելով ընկեր Մտալինի այդ առաջարարներից, կոմունիստական պարտիայի 10-րդ համագումարը որոշեց. «... պարտիայի խնդիրն է՝ օգնել ոչ-վելիկոուսական ժողովուրդների աշխատավորական մասսաներին՝ հասնելու առաջ անցած կենտրոնական Խուսաստանին, օգնել նրանց, որպեսզի՝ ա) իրենց մոտ զարգացնեն

<sup>1</sup> Ի. Վ. Ատալին, Պարտիայի հերթական խնդիրները ազգային հարց ում «Մարզսիղմը և ազգային զարդարական հարցը», 1935 թ., էջ 105.

ու ամբապնդեն սովորական պետականությունը այն ձեռքով՝  
որոնք համապատասխան են այդ ժողովուրդների ազգային նկա-  
րագրին, ը) իրենց մատ կազմակերպին տեղական ընտելչության  
կենցաղն ու հոգեբանությունն իւժացող տեղացիներից կազմական  
մայրենի լիզվավ գործող գտարան, աղքանիստարացիա, անոնեսու-  
թյան օրգաններ, իշխանության օրգաններ, դ) իրենց մատ մայ-  
րենի լիզվավ գարզացնեն մամուլ, գործոց, թատրոն, ակումբային  
գործը և առաջարարակ՝ կուլտուրալստավորական հիմնարկներ։<sup>1</sup>  
Պարտիայի այս քաղաքականության շնորհիվ, ուռու մեծ ժո-  
ղովրդի եղբայրական օդնությունը հայ ժողովուրդը, ինչպես և  
յուս եղբայրական ժողովուրդները, կարողացավ պատմական  
կարճ ժամանակամիջոցում հասնել առաջավոր արդյունաբերա-  
կան գյուղատնաեսական երկրի աստիճանին, եղոր թափով զար-  
գացնել իր անտեսությունը և ձեռվ աղզային, բովանդակու-  
թյամբ սոցիալիստական կուլտուրան, պրականությունն ու լե-  
զումն։

Առաջին և պատմականորեն խոշորագույն նվաճումը, որ  
ունեցավ մեր լիզուն սովորական կարգերի օրոք, այն է, որ նա  
զարձակ Սովորական Հայաստանի պետական լիզու՝ Ստալինյան  
Կոնստիտուցիայի կողմից հաստատված միութենական ռես-  
պուբլիկանների լիզուների շարքում իր պատվավոր տեղը ստա-  
նալով։ Այսպիսի նվաճում ունենալ, այսպիսի զնահատման ար-  
ժանանալ չեր կարող մեր լիզուն սովորական կարգերի հաստա-  
տումից առաջ։ Եվ այդ ընական է, ցարիզմի ազգային քաղա-  
քականությունը փակել էր բոլոր դաները դրա առջև։ Իսկ այդ  
արդյունք էր հենց աղզերի կազմավորման պատմական պրոցեսի։  
Պարտիայի 10-րդ համագումարում տված զեկուցման մեջ՝ պիտա-  
կանորեն վերլուծելով աղզերի ու աղզային պետությունների  
կազմավորումը՝ ընկեր Ստալինը ցույց է տվել, որ աղզերի և  
աղզային պետությունների կազմավորումը պատմական զար-  
գացման տարբեր ընթացքի և տարբեր աստիճանների շնորհիվ՝  
երկու տարբեր ուղիով է ընթանում։ Մի գեղքում, երբ ֆեռա-  
լիզմի լիկվիդացիան և կապիտալիզմի հաղթությունը զուգազի-  
ուում է կենարոնացած պետությունների գոյացմանը, աղզերի  
կազմավորման հետ միաժամանակ երեան են գալիս աղզային  
պետությունները։ Այդպիսիք են եղել Եվրոպայի արևմտաքի եր-

<sup>1</sup> Նոյն տեղում, էջ 98—99.

կըրները Մյուս դեպքում, երբ կենտրոնացած պետությունները պատմական անհրաժեշտությամբ հանդիս են գալիս ավելի շուտ, քան ազգերի կազմավորումը, հետագայում՝ ազգերի կազմավորման ժամանակ էլ մի կենտրոնացած պետության մեջ, մի ավելի զարգացած ու հզոր պղզի զվարական նույաստանը, Ավստրիան և այլն և Արևմուտքում — Անգլիայում, Ֆրանսիայում, Իտալիայում և մասամբ Գերմանիայում ֆեոդալիզմի լիկվիդացիայի և մարդկանց որպես ազգեր կազմավորվելու շրջանն ըստ ժամանակի ընդհանուր ու ամրողական տոռումով զուգադիոլեց կենտրոնացված պետությունների երեան գալու շրջանին, որի պատճառով ազգերն այնտեղ իրենց զարդարման ընթացքում պետական ձևեր էին ընդունում... Եվրոպայի Արևելքում, ընդհակառակը, ազգությունների գոյացման և ֆեոդալիզմի տրոհվածության վերացման պրոցեսն ըստ ժամանակի չզուգադիոլեց կենտրոնացված պետությունների գոյացման պրոցեսին: Ես նկատի ունեմ Հունգարիան, Ավստրիան, Ռուսաստանը: Այս երկրներում կապիտալիստական զարգացում դեռևս չկար, այն, թերեւ, նոր էր սազմավորվում, այնինչ, թուրքերի, մոնղոլների և Արևելքի այլ ժողովուրդների արշավանքից պաշտպանվելու շահեղը պահանջում էին անհապաղ կազմել կենտրոնացված այնպիսի պետություններ, որոնք ընդունակ լինեին զարգելու արշավանքի ուժը: Ել որովհետև Եվրոպայի Արևելքում կենտրոնացված պետությունների երեան գալու պրոցեսն ավելի արագ էր ընթանում, քան մարդկանց որպես ազգեր կազմավորվելու պրոցեսը, ուստի այնտեղ գոյացման խառը պետություններ, որոնք բաղկացած էին իրեն ազգեր առակազին չկազմավորված, բայց արդեն իրեն ընդհանուր պետություն միավորված մի քանի ժողովուրդներից: Այսպիսով, առաջին շրջանը ընորոշվում է կապիտալիզմի արշալույսին ազգությունների երեան գալով, ըստ որում Եվրոպայի Արևմուտքում ծնվում են զուտ-ազգային պետություններ՝ մի, ավելի զարգացած ազգի զվարակությունը և մեացած ավելի պակաս զարգացած ազգերով, որոնք ենթարկվում են տիրապետող ազգին քաղաքականապես, իսկ առաջ նաև տնտեսապես: Արևելքի այդ բազմազգի պետությունները եղան այն ազգային մնջման հայրենիքը, որը առաջացրեց ազգային կոնֆլիկտներ, ազգային շարժումներ, ազգային հարց և այդ հարցի լուծման

զանագան եղանակներ»<sup>1</sup>: Ընկեր Ստալինի այս հստակ, գիտական խորը վերլուծությունը միանգամայն սպասիչ կերպով լուսաբանում է պատմական այն իրողությունը, որ գոյություն ուներ ցարիզմի օրոք, և հիմնավոր կերպով ցույց տավիս, թե ինչու հայերի, վրացիների և մյուս բաղմաթիվ ժողովուրդների ազգային լեզուները չեին կարող գտննալ պետական լեզուներու իրեն աղդ արգեն կաղմավորված հայերը, վրացիները, ուկրաինացիները զուրկ էին իրենց աղդային պետությունն ունենալու հնարավորությունից: Ցարիզմի ստեղծած ազգային ճնշման, փոքր ազգերին սուսացնելու քաղաքականության պայմաններում, անշուշտ, ոչ միայն հնարավոր չէր այդ ժողովուրդների համար ազգային պետություններ ստեղծել, և հետեաբար՝ գարճներ նրանց աղդային լեզուները պետական լեզուներ, այլև ազգային կուլտուրաները, լեզուներն ու զրականությունը զարգացներ: Այդ իրողությունն էր, առա, որ հիմնովին փոխվեց սովետական իշխանության հաստատմամբ, և դրա առաջնակարգ հետեանքներից մեկը եղավ այն, որ ցարիզմի կողմից ճնշված փոքր ազգերը ստեղծեցին իրենց աղդային պետությունները և մասն Սովետական Միության մեծ ու համերաշխ ընտանիքի մեջ: Այս բանը միայն հնարավորություն տվեց հայերին, ինչպես և մյուս բազմաթիվ ազգերին, իրենց աղդային լեզուն պետական լեզվի աստիճանին բարձրացնելու: Այժմ հայոց լեզուն ոչ միայն Սովետական Հայաստանի միակ պետական լեզուն է, այլ և Սովետական Միության պետական լեզուներից մեկն է: Առա նրանով են գրվում ՍՍՌՄ Գերազույն Սովետի և Մինիստրների Սովետի որոշումները, երամանագրերն ու օրենքները, նա իր պատվավոր տեղն է գտնի ՍՍՌՄ-ի գերբի վրա և դրամների վրա: Իսկ այս՝ հայոց լեզվի պատմության մեջ մի ոյնպիսի նվաճում է, որին նա կարողացավ հասնել միայն սովետական իշխանության շնորհիվ: Սա մի նվաճում է, որ մեր լեզվի աննախընթաց զարգացման նախապայմանն է հանդիսացել:

Երկրորդ նվաճումը, որին հասել է հայոց լեզուն սովետական կարգերի օրոք, այն է, որ նա զարձել է աշխատավոր հայ ժողովրդի սեփականությունը: Սովետական կարգերի հաստատման առաջին իսկ օրերից մեր կառավարությունն ու կոմունիստական պարտիան ձեռք առան անհրաժեշտ միջոցները՝ աշ-

<sup>1</sup> Ի. Վ. Ստալին, նույն տեղում, էջ 103—104:

լոտավոր մասսաներին գրադեռ դարձնելու համար, անդրտգիտությունը վերացնելու համար Առ մեր ժողովրդի ամենալայն խավերին հնարավորություն տվեց հաղորդակից լինել գրավոր խոռքին, մատուցի ու գրականության միջոցով սովորել գրական լեզուն Դպրոցների լայն սանցի, թատրոնների, ուղղությունը միջոցով այդ լեզուն է՝ ավելի արագությամբ հաղորդվեց լայն մասսաներին, աստիճանաբար զուրս մղեց ընդհանուր խոսակցական լեզվից բարբառները և ինքը՝ սովետակայ գրական լեզուն, դարձավ ընդհանուր, աղջային խոսակցական լեզու ։ Սովետական իշխանությունը մեր գրական լեզուն դարձրեց նրա պայքարի ու շինարարության ամենօրյա զինքը, կուլտուր-լուսավորական ցանցով, մասսայական դպրոցներով, անդրադիտության վերացմամբ, մասսայական սովետացիայով, մամուլի, գրականության, թատրոնի ու ռադիոյի միջոցով, արտադրության, գյուղատնտեսության, կուլտուրայի և կառավարման սովետական սիստեմով (նիստեր, ժողովներ, խորհրդակցություններ, կոնֆերանսներ, համադրումարներ, սեսիաներ), գյուղի ու քաղաքի մերձեցման միջոցով և այլ ռեզիներով մեր աղջային գրական լեզուն հասավ գործարան, հասավ գյուղ, գարձավ բան, թղթակցի, գյուղ. թղթակցի, գյուղ. թղթակցի, ցեխի վարպետի, կոլտնտեսական բժիշկադավարի, արտեկուրիստի լեզուն».<sup>1</sup> Այսպիսով, սովետական իշխանության օրու և ներկա սովետական իշխանության շնորհիլ մեր լեզուն ստացավ ամենամեծ ժողովրդայնություն ու դարձավ սովետակայ ժողովրդի բնիհանուր խոսակցական լեզուն:

Երրորդ նվաճումն այն է, որ մեր լեզուն դարձել է Հայաստանի բաղմաթիվ բարձրագույն ուսումնական հաստատությունների ու տեխնիկումների և ժամանակակից առաջավոր սովետական գիտության ու տեխնիկայի լեզուն։ Մինչև սովետական կարգերի հաստատվելը, Հայաստանում գյուղություն չուներ և ոչ մի բարձրագույն ուսումնական հաստատություն, և բնական է, որ այդ կարգի ուսումնական հաստատությունների դասազդքերի ու դրանց համար անհրաժեշտ չափով զարգացած լեզվի ստիպողական պահանջը չէր պահանջում։ Մինչդեռ սովետական իշխանության օրոք հիմնված բազմաթիվ բարձրագույն ուսումնական հաստատությունների համար մայրենի լեզվով դասագրքերի

<sup>1</sup> Գ. Սելակ, Հայոց լեզվի զարդարման սովետական փուլը, Երևան, 1946,

առեղծման անհրաժեշտությունը ինքնին ստիպում էր մշտկել հարստացնել մեր լիզուն համապատասխան տերժիններով։ Դրան զուգընթաց զիտության ու տեխնիկայի աննախանթաց վերելքը նույնպիս անհրաժեշտաբար ստիպում էր զարգացնել մեր լիզուն դիտաւաելինիկական տերմինորոգիայով։ Այս բարորի շնորհիվ էլեահա, սովորական լիզուն էլ ափելի զարգացավ, հարստացավ հազարար տերմիններով, դարձավ ժամանակակից առաջավոր զիտուրյան, տեխնիկայի ու փիլիսոփայուրյան նօխապիս զարգացած, նշգրիտ արտահայտչական միջոցներով հարուստ ու նկատ լիզուն եթե սրան ավելացնենք նաև այն, որ՝ պետական լիզու գառնությով՝ սովորական լիզուն հարստացել է իրավաբանական, դատավարական-դատատական, պետական-վարչական, օրենսդրական, պարտիական-կազմակերպչական բազմաթիվ տերժիններով, ոճերով ու գարձվածքներով, առաջ պարզ կլինի, թե զարգացման ինչ պիսի՞ բարձր աստիճանի է հասել մեր լիզուն։

Չորրորդ նվաճումը, որին հասել է մեր լիզուն, ինչպիս և Սովորական Միության մյուս ժողովարդների լիզուները, այն է, որ նա՝ մնալով ձեռվ ազգային, բավանդակաւրյամբ դարձել է սոցիալիստական։ Ինչպիս զիտենք, զասակարգայնորեն երկասոված հասարակությունների մեջ՝ սորկատիրական, ֆեոդալական և բռնժուական հասարակությունների մեջ՝ լիզուն նույնպիս դասակարգայնորեն երկատված է, բուրժուական հասարակությունից մենք ժառանգել ենք նենց այդպիսի՝ զասակարգայնորեն երկատված ազգային լեզու։ Սակայն սովորական իշխանության տարիներին այդ զիտակը ևս փոխվել է։ Պրոլետարական ուժուլուցիան և զրա շնորհիվ՝ պրոլետարիատի զիտատուրայի ստեղծումը նոր հունի մեջ զրեցին ինչպիս ժողովուրդների տնտեսական-քաղաքական կյանքը, նույնպիս և բոլոր վերնաշնքային երկույթները, այդ թվում և լիզուն։ Սովորական կարգերի գոյության տարիներում ազգային խոսակցական լիզուների զարգացումը կարելի է բաժանել երկու շրջանի։ Առաջինն ընդգրկում է այն շրջանը, երբ մեր երկրում գեռևս գոյություն ունեին շահագործող զասակարգերը։ Այդ շրջանում, ընականաբար, մեր ազգային խոսակցական լիզուները գեռևս ըստ բովանդակության դասակարգայնորեն երկատված էին։ Երկրորդ շրջանն այն է, երբ մեր երկրում շահագործող զասակարգերը վերացել են, այլև գոյություն չունեն։ Բնականաբար այս շրջանում մեր ազգային լիզուներն էլ ըստ բովանդակության զասակարգայնորեն եր-

Հաստիած չեն Նրանք բոլորն ել բովանդակությամբ սոցիալիստական են: Այլ է գրական և պետական լեզուների զարգացման ընթացքը: Ֆրական և պետական լեզուների զարգացման մեջ սովորական կարգերի օրոք, այդ երկու շրջաններն այլ արտահայտություն ստացան: Պրոլետարիատի դիկտատուրայի ստեղծման հետ անողոք պայքար է մզվում շահագործող գասակարգերի վեմ՝ հանուն դրանց վերացման: Այդ պայքարը բացառում էր հակասովետական պրոպագանդայի հնարավորությունը՝ զրավոր խոռոչով, մամուլի ու գրականության միջոցով: Սրա արդյունքն այն էր, որ ազգային գրական ու պետական լեզուները դարձան միայն ու միայն պրոլետարիատի և աշխատավոր դյուղացիության սիփականությունը՝ սովետական կարգերի հաստատման հենց առաջին տարիներից: Գրական ու պետական լեզուները՝ մնալով ազգային ըստ ձեր՝ բովանդակությամբ դարձան պրոլետարական: Սոցիալիզմին անցնելով, նրանք՝ պահպանելով իրենց ազգային ձևը, բավանդակությամբ դարձան սոցիալիստական: Աճա, սովորական լեզուն ել անցել է այդ ուղին և այժմ ունենալով իր ազգային մեր՝ ունի մի՛ բավանդակություն միայն՝ սոցիալիստական բավանդակություն: Այս ասպարեզում մենք ենք է խաղացել այն հանգամանքը, որ մեր լեզուն սովորական կարգերի օրոք դարձել է պետական վերսակողության առարկա: Մեր կառավարությունը և կոմունիստական պարտիան, շահագործուված լեզվի զարգացման գործում, ամենօրյա զեկավարությամբ ու հսկողությամբ՝ համապատասխան մարմինների միջոցով (Տերմինարանական կոմիտե, Համալսարան, Ակադեմիա, մասնագիտական հանձնաժողովներ և այլն) ուղիղ հռւի մեջ է պահել մեր լեզվի զարգացման ընթացքը, ժամանակին մերկացրել ու դատապարտել լեզվի զարգացման հարցում երեան եկած խորթ ու հակասովետական տենտենցները և զրանով իսկ ապահովել մեր լեզվի օրինաչափ, նպատակադիր զարգացումը: Այժմ մեր լեզուն չի զարգանում տարերայնորեն, ինչպես նախառական շրջանում, այժմ անհատների քմահաճույքը մեր լեզվի զարգացման ուղին մազաշափ անգամ փոխել չի կարող:

Ի վերջո, հինգերորդ նվաճումը, որին հասել է մեր լեզուն, և որ պայմանավորված է նախորդ կետերում նշած նվաճումներով, այն է, որ մեր սովորական լեզուն այժմ արդին հանդիս է գոլիս իրեն և այ ժողովրդի համազգային լեզու: Մինչև սովետական գաղաքական հաստատումը հայ ժողովուրդը զուրկ է եղել մի միաս-

համադրային լեզից Առվետական իշխանության շնորհ հրդ մեր լեզուն զարդացման այնպիսի մակարդակի հասավ, որ այսօր, երբ հայ ժողովուրդը միավորվում է, երբ նրա տարրեր հատվածները՝ վտարանդի հայերը՝ վիրազանում են իրենց հայրենիքը, սովորակայ լիզուն հանդես է գալիս իրքեւ այդ միավորվող, ամբողջացող հայ ժողովրդի համադրային լեզու:

Այս բանը լավ է զիտակյում արտասահմանյան հայությունը որ հայկական զարդացմանը մացրել է սովորակայ լեզի ուսուցումը Դա դործնական տպացույցն է մեր ասածի Ասկայն, ականականորեն և այդ երեւոյթը լրասաբանելու համար մենք ավելուրդ չենք համարում փոքր ինչ հանդամանորեն խսուել այդ մասին:

Պատմական իրողությունների հատեանքով հայ ազգը բաժանվել է երկու հատվածի: Այդ հատվածներից յուրաքանչյուրը լինելով մի ուրիշ ազգի աիրավիճության տակ՝ զարդացման յուրահատուկ ընթացք է ստացել: Արեւելահայ հատվածը կամ այսպես կոչված Ռուսահայուտանի հայությունը յուր բախտը կապած լինելով ուսւ մեծ և առաջավոր ժողովրդի հետ, թեև իրեւ ցարիզմի կողմից ճնշված ազդ, այնուամենայնիվ համեմատարար ավելի բարեհաջող ուզու վրա է կանգնել նույն ուսւ ժողովրդի օգնությումք թոթափելով իր վզից շահագործողների լուծծը, համազդի և այլազդի բուրժուազիայի լուծը՝ արեւելահայ հատվածի հայությունը ստացել է անկախություն և ազատություն, ստեղծել իր պետությունը և դրանով իսկ ապահովել իր անկաշխանդ գարզացումը:

Այլ է եղել մյուս հատվածի՝ Արեւելահայաստանի հայության վիճակը: Ենթակա լինելով թյուրքական բռնապետության անսանձ ճնշմանն ու կեղեգմանը՝ Թյուրքահայաստանի հայությունը ոչ միայն զրկվել է յուր ազգային կուլտուրայի, զրականության ու լեզվի զարդացման ճնարավորությունից, այլև՝ գոյության իրավունքից: Արեւելյան բռնակալության ամենավայրագ մեթոդներով թյուրքական պետությունը զրկել է հայերին իրենց ազգային հատկանիշներն անդամ պահպանելու հնարավորությունից, առանց միջոցների խորության՝ գործադրելով հայերին ընաշնչնելու կամ, նվազագույն դեպքում, թյուրքացնելու քաղաքականությունը՝ Վերջապես, նույն թյուրքերի կողմից հայերին կոտորելը և իրենց հայրենիքից՝ Թյուրքահայաստանից գաղթեցնելը վերջնականապես զրկեց հայ ազգի արեւելյան հատվածին՝ հետագա միասնական զարդացման ամեն մի հնարավորությունից:

Վատարանդի հայերը հաստատվեցին աշխարհի տարբեր մասերում՝  
ստեղծելով հայկական գաղութներ, որոնցից յուրաքանչյուրն իր  
կյանքի ուրույն պայմաններին համապատասխան էլ գարգացման  
յուրահատուկ ընթացքն ունեցավ:

Հայ ազգի այդ վիճակը ճշտորեն արտացոլում է նաև հայե-  
րեն լեզուն՝ յուր երկու ճյուղերով և նրանց զարգացման տար-  
բեր ուղղություններով, աստիճանով ու բնույթով։ Արևելահայ  
լեզուն, որ մինչև սովորական կարգերի հաստատումը գերա-  
զանցապես զրական լեզու էր, իսկ իրեւ խոսակցական լեզու ծա-  
ռայում էր միայն մի բուռն ուսույալ հայերի, սովորական կարգե-  
րի հաստատումով զարգացման նոր հունի մեջ մտավ։ Գրակա-  
նության, մամուլի, պարոցների, բարձրագույն ուսումնական հաս-  
տատությունների, թատրոնի, ուղիոյի միջոցով շուտով նա Ծո-  
վետական Հայաստանի ամբողջ հայության սեփականությունը  
դարձավ։ Զդաղարելով գրական լեզու լինելուց, այլ ընդհակա-  
ռակն, իրեւ այդպիսին էլ ավելի ժշակվելով ու զարգանալով,  
սովորական լեզուն զարձավ մեր երկը աշխատավորական հոծ  
մասսաների խոսակցական լեզուն։

Հակառակ պատկերն է ներկայացնում արեմտահայ հատ-  
վածի լեզուն։ Նախ և առաջ՝ նույնիսկ հայերին թյուրքահայաս-  
տանից գաղթեցնելուց առաջ էլ արեմտահայ գրական լեզուն  
շատ ավելի հեռու է եղել մասսաներից՝ լինելով մի բուռն ին-  
տելիգենտների սեփականությունը։ Հայտնի է, որ հենց այդ  
պատճառով էլ արեմտահայ գրական լեզուն հաճախ կոչվել է  
«Ճերմոցային» կամ «արվեստական» լեզու։ Սակայն այդ վիճակն  
էլ ավելի վատթարացավ հայերին իրենց հայրենիքից՝ թյուր-  
քահայաստանից գաղթեցնելու հետեւանքով։ Տարբեր երկրներում  
հիմնված հայկական գաղութներում հայոց լեզուն զարգացման բո-  
լորովին տարբեր ուղղություններ ստացավ։ Խոսքը միայն այն  
մասին չէ, որ յուրաքանչյուր հայկական գաղութում իրեւ խո-  
սակցական լեզու հաճախ հանդիսանում է տվյալ երկը լեզուն  
(ֆրանսահայերի մոտ՝ ֆրանսերեն, տմբերիկահայերի մոտ՝ անգլ-  
երեն, Սիրիայում՝ արաբերեն և այլն, և այլն), ոչ էլ այն մա-  
սին, որ յուրաքանչյուր հայկական գաղութի հայերը, եթե մի-  
մյանց հետ խոսում էլ են մայրենի լեզվով ու գրանով պահպա-  
նում գենես հայերենը այդ գաղութներում, ապա՝ նրանք խոսում  
են ոչ թե մի ընդհանուր գրական հայերեն լեզվով, այլ այս կամ  
այն հայերեն բարբառով։ Խոսքն այն մասին է, որ արեմտահայ

լեզուն ևս, իրրե գրականության ու մամուլի լեզու, այն աղքատիկ գրականության ու մամուլի, որ հրատարակվում է տրտառահմանյան հայ գաղութներում, ընդհանուր չե բոլոր երկրների հայկական գաղութների համար, և, որ գլխավորն է, տռավել ևս կտրված է ժողովրդից, առավել ևս հեռացած աշխատավորական լայն մասսաների խօսակցական լեզից: Բնական է, որ այսպիսի դայնաններում արհմտահայ գրական լեզուն, որն առանց այն էլ ջերմոցային լիզի դրոշն էր կրում, պետք է իր հետազոտ միամանական և ինքնուրույն զարգացման հնարավորությունից զըրկվեր ու գտանար ավելի ևս անկենզան, ոչ կենսունակ, միայն և միայն գրական լիզու իրականությունը ցույց է տալիս, որ իսկապես այդպիս է, և այդ պատահական չէ: Արտասահմանյան հայկական գաղութներում ոչ միայն հայերեն լիզուն, այլև ամբողջ հայ աղքային կուլտուրան զրկված է ինքնուրույն զարգացման հնարավորությունից, նայ, առանց երկրայության կարող ենք ասել այլև չի զարգանում իրրե աղքային կուլտուրան Արտասահմանյան հայությունը, առարքեր գաղութներում, լավագույն գեղջում կարգանում է միայն պահպանել աղքային կուլտուրան, այն էլ յուրաքանչյուր զաղութում այդ երկրի կուլտուրայի ուժեղ աղղեցության ներքու Եթե նույնիսկ որոշ դաշութներում զարգացման որոշ նշաններ էլ կան, ապա՝ այդ զարգացումը կատարվում է զարձյալ օտարազգի կուլտուրայի ճնշող ապղեցությամբ: Այդ պատճառով էլ արտասահմանյան հայությունը մի միասնական, բոլոր հայկական գաղութների համար ընդհանուր կուլտուրա չունի: հայ աղղային կուլտուրան յուրաքանչյուր գաղութում ստացել է նոր, ուրույն երանք՝ համալատասխան երկրի կուլտուրայի խիստ աղղեցության շնորհիվ: Այդ պատկերն է ներկայացնումնաև արտասահմանյան հայության գրական լիզուն: Չունենարկով այն կենարար հողը, որի վրա աճեր սիամնական լիզուն, արևմտահայ գրական լեզուն զարգացման ուրույն ընթացք է ստացել տարբեր զաղութներում: Յուրաքանչյուր հայկական գաղութի գրական լիզուն կը ունի է տեղական լեզի աղղեցության ուժեղ կնիքը, բավական է աչքի անցկացնել թերթերը՝ համոզվելու երկրներում հրատարակվող հայերեն թերթերը՝ համոզվելու համար, թե զարգացման ինչպիսի տարբեր ընթացքի մեջ է արևմտահայ գրական լիզուն, թե որքան տարբեր է այդ լիզուն զանազան հայկական գաղութներում: Մի տեղ նրա մեջ առատորեն մուտք են գործել անգլերին, մի

այլ տեղ՝ ֆրանսերեն կամ այլ լեզվի բառերը, դարձվածքներն ու ոճերը, կամ գրանց բառացի թարգմանությունները։ Մի քանի հայերի ջանքերը՝ հայերենը տեղական լեզվի ազգեցությունից գերծ պահելու համար, հաջողությամբ չեն պատկում, և այդ հասկանալի ու բնական է։ Լեզուն չի կարելի արհեստականորեն անջրպետել հարեւան լեզուներից, մանավանդ, ավելի ուժեղ լեզվից, իսկ արտասահմանյան հայ գաղութներում հայերեն գրական լեզուն թույլ է և անդո՞ւ տեղական լեզուների նկատմամբ։ Բայց այդ էլ դեռ բավական չէ. նույնիսկ այն դեպքում, եթե ընդունենք, որ բոլոր հայկական գաղութներում արևմտահայ գրական լեզուն, այնուամենայնիվ, ընդհանուր հատկանիշներ և այն՝ ոչ երկրորդական հատկանիշներ ունի, — իսկ այդ անժխտելի է, — նույնիսկ այդ դեպքում էլ մի ուրիշ հանգամանք ևս պետք է նկատի առնենք։ Արտասահմանյան բոլոր գաղութներում չէ, որ մամուլի լեզու է արևմտահայ գրական լեզուն. հայտնի է, որ արտասահմանում լույս տեսնող շատ թերթերի ու ամսագրերի լեզուն է արևելահայ աշխարհաբարը, որ, ճիշտ է, շատ ու շատ ցածր է սովորակայ լեզվի գարգարցման աստիճանից, բայց և այնպես, հիմնական հատկանիշներով նրան է հանգում։ Այս պատճառով էլ ահա, ապարդյուն են անցնում արտասահմանյան մի բուռն հայերի բոլոր ջանքերը՝ ընդհանուր գրական հայերեն ստեղծելու գործում. բացի այն ճշմարտությունից, որ լեզուների արհեստական միավորումն ընդհանրապես բացառված է, այդ փորձերը դատապարտված են անհաջողության նաև այն ցավալի, բայց պատմականորեն ուսալ իրականությամբ, որ արտասահմանյան հայությունը դուրկ է տերիտորիայ, վարչական ու կուլտուրական միասնությունից, որ նա բաժան-բաժան է եղել բազմաթիվ գաղութների միջև։

Այս թեթևակի պատմական ակնարկը՝ հայերեն երկու գլուխական լեզուների զարգացման ու նրանց արդիական վիճակի վերաբերյալ, ինքնին արդեն ցույց է տալիս, թե ինչու արևելահայ գրական լեզուն, այժմ՝ սովորակայ լեզուն, ի վիճակի եղավ դառնալ ոչ միայն Սովորական Հայաստանի պետական, գրական ու խոսակցական լեզու, այլև հայության համազային լեզու։ Մինչդեռ արտասահմանյան որոշ հայեր, մոռանալով պատմականորեն հաստատված այդ փաստը, անտեսելով սովորակայ լեզվի համազային էությունը, երբեմն «մտածում» են համազային հայերեն ստեղծելու մասին և առաջարկում են դրա «միջոցը»։ Այդ մարդկանց կարծիքով պետք է արհեստականորեն

միացնել սովհատակայ լիզում արհմատայիրենին, ձուլել համապրել այդ երկուոք և այգալիսով ստանալ մի «համալզային» հայերեն։ Այդ «քաջ ահսարանները» չեն ըմբռնում, և թերեւ ի վիճակի էլ չեն ըմբռնելու, որ հայերեն համալզային լեզուն կմատրդին, որ նա ոչ թե արվիստական համադրումներով սահղագործված է, այլ պատմական օրինաշտփ զարգացմամբ դարձել է այլպիսին։ Բայց սրահողի մեր առածն ավելի ոլարդ կերպով հաստատենք, անհրաժեշտ է սրաշեր թե ինչ բան է ապդային լեզուն։ Աղպային լեզու կարող է կոչվել այն լեզուն, որ ավյալ ազգի ընդհանուրը, բոլորին մատչելի լեզու է, ըստ որում, աղպային լեզուն կարող է լինել միայն խոսակցական, ինչպիսիք էին ցարական թուստատնի բաղմաթիվ ճնշված փոքր ողպությունների լեզուները, կարող է լինել գերազանցապես զրական, իսկ աղպության մի փոքր մասի համար միայն՝ նաև խոսակցական լեզու, ինչպիսին է նախասովետական շրջանի հայերենը («աշխարհաբարը»), և, վերջապես, աղպային լեզուն կարող է լինել և խոսակցական, և՛ զրական, ինչպիսիք են Սովհոտական Միության բաղմաթիվ աղպային լեզուները՝ ոռւսերենը, հայերենը, ուկրաիներենը, վրացերենը և այլն Եթե այսպիս է, աղպա աղպային լեզու կարող է գոյություն ունենալ միայն ազգի ներսում և ոչ նրանից գուրատ իսկ հայ աղպը, որպես այլպիսին, կամ, գոյություն ունի Սովհոտական Հայաստանում։ Սովհոտական Հայաստանն է նրա օրբանը։ Աղպյոք արտասահմանյան հայ գալութների հայությունը առանձին վերցրած կաղման է մի ինքնուրուցն աղպություն, արդյոք նա ինքնին ազգ կարմղ է համարվել Բնականաբար՝ ոչ, որովհետև՝ «Աղպը մարդկանց պատմականուրեն կազմավորված ընդհանրությունն է, որ ծագել է լեզվի, տերիտորիայի, անտեսական կյանքի և կուլտուրայի ընդհանրության մեջ՝ զրանորվող հոգեկան կերտվածքի ընդհանրության մեջ» (Ի. Վ. Ստալին, Երկեր, հ. 11, էջ 346)։ Աւսի, արդյոք, արտասահմանյան հայությունը այլպիսի ընդհանրություն. ոչ, չունի։ Տընտեսական կյանքի և տերիտորիալ ընդհանրության մասին խոսելու ավելորդ ենք համարում, դա ինքնին հայտնի է։ Ինչ վերաբերում է կուլտուրայի և լեզվի ընդհանրությանը, աղպա մենք վերը ցույց տվինք արդեն, որ արտասահմանյան հայության մեջ այդ ևս իր իսկական իմաստով գոյություն չունի։ Կուլտուրայի ու լեզվի որոշ ընդհանրություններին զուգընթաց յուրաքանչյուր հայկական զաղութի կուլտուրան ու լեզուն տարբերվում է մյուսներից շնորհիվ այն պայմանների, որոնց մեջ նա զոյություն ունի։

Ուստի և արտասահմանյան հայությունը ինքնին ազգ չի կաղ-  
մում: Վերոհիշյալ ընդհանրությունը ունի արդյոք Սովետական  
Հայաստանի հայությունը. այս, ունի: Սովետական Հայաստանի-  
հայությունը ունի իր տերիտորիայի, տնտեսական կյանքի, կուլ-  
տուրայի, լեզվի ու հոգեկան կերպածքի ընդհանրությունը, և  
այդ բոլորին հայտնի է: Նշանակում է՝ Սովետական Հայաստանի  
հայությունը անվիճելիորեն ազգ է: Բայց ինչ է այդ գեղթում  
արտասահմանյան հայությունը: Արտասահմանյան հայկական գա-  
ղութերի հայությունը Սովետական Հայաստանում գտնվող և նրա  
շնորհիվ միայն գոյություն ունեցող հայ ազգի մի մասնիկը, մի  
հատվածն է: Եթե այդ այդպես է, ապա ազգային լեզու կարող է  
լինել միայն Սովետական Հայաստանի լեզուն. այդ ևս անվերա-  
պահորեն ճիշտ է: Այդ գեղթում՝ ավելորդ և այլու խռովել համագ-  
զային հայերեն «ստեղծելու» մասին: Նա արդեն կա, նա սովետա-  
հայ լեզուն է, որ համազգային է Սովետական Հայաստանի մաս-  
շտարով: Եվ հայության այն հատվածները, որոնք կամենաւմ են  
իրենց բախտը կապել Սովետական Հայաստանի հետ, անշուշտ-  
պեսք և խռով ու գրեն այդ լեզվավ: Արտասահմանյան մի քանի  
հայ «լեզվագետներ» դուռ չեն հասկացել այդ և հաշիվ չեն տվել  
իրենց, թե ինչ կնշանակի «ստեղծելու» մի «համազրական» հայե-  
րեն լեզու: Նրանք իրեն թե այդ առաջարկում են հայերի գործը-  
ունեցացնելու համար, բայց չեն գիտակցում, որ իրականում  
ճիշտ դրա հակառակը կստացվի: Ենթադրենք, թե իսկապես  
«ստեղծվեր» այդպիսի լեզու՝ ինչ կնշանակեր այդ: Ամենից առաջ-  
դա կնշանակեր մի կողմ թողնել մեր կենդանի, կենսունակ, ժո-  
ղովրդական լեզուն և դրա փոխարեն ստեղծել մի արվեստական  
լեզու: Բայց այդ իր հերթին նշանակում է, թե մի նոր լեզու  
պետք է սովորեր ոչ միայն արտասահմանի հայությունը, այլև  
Սովետական Հայաստանի հայությունը: Այս է այդ մարդկանց  
«հոգատարությունը»: Նրանք իրեն թե ուզում են ազատել ներ-  
գաղթող հայերին սովետահայ լեզուն սովորելու «ղփարությու-  
նից», բայց իրականում ոչ միայն նրանց չեն աղատում նոր լեզու  
սովորելու անհրաժեշտությունից, այլև ուզում են սովետահայ  
ժողովրդի վզին էլ փաթաթել այդ անհրաժեշտությունը: Հայ  
ազգը հրաժարվում է այդ կարգի «հոգատարությունից»: Բացի  
դրանից, այդ «լեզվագետները» մոռանում են, որ լեզուն մի ան-  
բաժանելի միասնություն է կազմում գիտակցության հետ, որ  
լեզուն յուր բովանդակությամբ արտահայտում է հասարակու-  
թյան կեցությունը: «Լեզուն որոշ կոլեկտիվի... առկա կեցու-

թյունն է, այս էլ նրա բնքնախոսող կեցությունը, — առավ է կարլ Մարքսը: Տվյալ գեղքում սովորահայ լեզուն Սովետական Հայաստանի հայության տիեզնախոսող կեցությունն է, սոցիալիստական հասարակության կեցությունը: Արտասահմանյան այն հայերը, որոնք իրենց բախուը կտապում են Սովետական Հայաստանի հետ, բնականաբար ապրում են այդ կեցությամբ, ուստի և նրանց այս կեցությանը համապատասխանում է միայն և միայն սովորահայ լեզուն: Վերջապես, ասենք թե նատակոր իններ ռասեղծելը մի համադրական հայերն, ապա՝ համազրության մի կողմում սովորահայ լեզուն զնելով՝ այդ շեղվագետները մյուս կողմում հայ գաղութներից որի լեզուն կզնեին, չէ որ, ինչպես ասացինք, հայկական գաղութները միասնական խոսակցական լեզու չունեն, նույնիսկ գրական լեզուն զգալիորեն տարբերվում է ըստ տարբեր գաղութների՝ տեղական լեզուների ազգեցության շնորհիվ: Պարզ չէ՝ միթե, որ այդ մարդիկ նույնիսկ չեն էլ մտածում, թե իրենց առաջարկեցը անիրագործելի է և, մանավանդ, ավելորդ Համազային լեզուն կա արդեն, հարկավոր է սովորել այն, Հայերի համազային լեզուն և՛ և կարգ է լինել միայն և միայն սովորահայ լեզուն, ինչպես որ նոյ ազգի և նրա ազգային կուլտուրայի օրբանը և՛ և կարգ է լինել միայն Սովետական Հայաստանը: Արտասահմանյան այն հայերը, այն վայ-լեզվաբանները, որոնք առաջ են քաշում Շնոր համազային լեզու ստեղծելու հարցը, կամ վեճի տառրկա են գարձնում այն ինդիքը, թե արեմտահայերնը պետք է լինի համազային լեզու և գրանով իսկ վիճարկում սովորահայ լիզի համազային ընույթը, իրականում ոչ թե շահագրղոված են համազային լեզու ունենալով, այլ՝ ճիշտ հակառակով: Նրանց շատ է զայրացնում Սովետական Հայաստանի զարգացումը, շատ է վախեցնում հայ ազգի երկու հատվածների միավորումը: Եվ ահա, իրենց մունկին կատաղության մեջ այդ վայ-հայերը փորձում են նոր վեճեր առաջ քաշել և թշնամաբար տրամադրել արտասահմանի հայությանը Սովետական Հայաստանի նկատմամբ: Ծանոթ երգ է դա, բայց վաղուց, արդեն, հայերին ահաճ է այդ երգը: Կապիտալիսմի պնակալեզների վայրահաջն ու ունոցը հայ աշխատավոր ժողովրդի երկու հատվածներին չի պառակտի. ընդհակառակն, աշխատավոր հայ ժողովրդի հատվածները, ի պատասխան դրան, սովետական կարգերի հիման վրա է՛լ ավելի սերտորեն կհամախմբվեն և արդեն համախմբվում են, ինչպես ցույց է տալիս իրականությունը: